



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի, Եսեռույան 2,
Հեռ. 060-74-34-01

N 68

05 փետրվարի 2018թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Կ. ԲՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բոթոյան,

Կից ուղարկվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ավագանու 22.01.2018թ. ուղերձը:

Խնդրվում է միջոցներ ձեռնարկել ուղերձում առաջ քաշված հարցերին համապատասխան լուծում տալու համար:

Կանխավ հարտնում եմ իմ շնորհակալությունը:

Առդիր 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. Ռսկանյան

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՈՐՈՇՈՒՄ N 13

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«22»-ր հունվարի 2018թ.

Ք. Մարտունի

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂՎՔԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՑԻ, ԱԲՈՎՅԱՆ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԱՅԹԵՐԻ, ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՂԵՐՁՈՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 14-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով համայնքի շուրջ 150 բնակիչների կողմից Մարտունի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը և նկատի ունենալով, որ Մարտունի քաղաքի Կամոյի փողոցում բացակայում են մայթերը, ջրահեռացման համակարգերը, լուսավորության ցանցը և ճանապարհային երթևեկության նշանները, իսկ Աբովյան և Շահումյան փողոցներում՝ ջրահեռացման համակարգերը, լուսավորության ցանցը և ճանապարհային երթևեկության նշանները, որոնց բացակայությունը հաճախակի պատճառ է դառնում մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ Է

Ուղերձով դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետ պարոն Կարեն Բոթոյանին և խնդրել միջոցներ ձեռնարկել Մարտունի քաղաքի միջպետական նշանակության Կամոյի փողոցի մայթերի, ջրահեռացման համակարգերի, լուսավորության ցանցի կառուցման և ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման, իսկ միջպետական նշանակության Աբովյան և Շահումյան փողոցներում՝ ջրահեռացման համակարգերի, լուսավորության ցանցի կառուցման և ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման համար:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ
Գ.ՈՍԿԱՆՅԱՆ